

ներք կարծիքով կեանքի երկարութիւնը պիտի տևէ 900—1000 տարի կամ առնուազն 600 տարի: Նոյն իսկ նորագոյն ժամանակներն էլ ունեցել են կեանքը երկարացնելու յատուկ էլիքներնեք և խորհրդաւոր զեղազերներ. նաև մեր դարը երկարակեցութեան հոգներով իւր նախորդներէց յետ չի մնացել: միայն թէ այդ արուեստի համար առաւելապէս ընտրել է՝ ժամանակի զետուծեան յառաջադիմութեան համեմատ՝ առողջապահութիւնը:

Ս. Մ.

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ

Մ. ԽՈՐԵՆԱՍՏՈՒ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԷՋ

(ԲՆԵԱՒԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՒՍՈՒԱՆՔ)

(Նարոնակորիս) *



Ե.

Հ Ա Յ Կ Ի Ա Ռ Ա Ս Պ Ե Լ Ը

Հայկի ու Բէլի եւ Սմբատի ու Հեփթաղի կրիները:— Հայկի առասպելի գոյութիւնը ժողովրդի մէջ աժան կերպով ոչնչացնելուց յետոյ՝ պ. Մալաթեանը Մորենացու ինքնուրոյն հեղինակութիւնն էլ չէ համարում այն այլ կազմած Սերէոսի մէջ եղած [կամ Սերէոսին կցուած] Անանունի հատուածից, Սերէոսից և Սուտ-Պալլիսթենէսից:

Մար Արասի (բստ Մորենացու) և Անանունի մէջ վաղուց նկատուած առնչութեան (այլ ինչիւր է թէ ինչպիսի յարաբերութեամբ) դէմ ոչինչ չունինք ասելու: քանի որ ինչպէս կարծում ենք, ակնյայտնի է այն: Ուստի և Հայկի առասպելի վիպականութեան մասին գրողը կարող չէ Անանունի պատմուածքը ի նկատի չունենալ: Բայց չենք կարող ընդունել պ. Մալաթեանի սեպհական կարծիքը (եր. 120): Եթէ Մ. Մորենացին Սերէոսի Պատմութիւնից վերցրել է մի քանի գծեր Սմբատ Բագրատունու՝ Բուշանաց թագաւորի հետ ունեցած մենամարտի նկարագրից, յարմարեցնելով անոնք Հայկի պատերազմին

Բէլի հետ: Երկուսի մէջ եղած նման գծերը որ բերուած է իւր աշխատութեան Բ. մասի մէջ, եր. 21 հա. այս են. երկու գէպքում էլ թշնամի զօրքերն իրար դէմ են կընում: Սմբատը Հեփթաղին իսկ Հայլը Բէլին այսպէս են: և սպանուածներին զօրքերն այդ տեսնելով փախչում են:

ՍԵՔՆՈՍ (եր. 66—67). «Սմբատ ժողովէ զգաւրն... գումարէ այլ զարս... և զիմեալ գնայր ի վերայ ազգին Բուշանաց և արքային Հեփթաղեայ... Եւ նա (Հեփթաղ) ընդդէմ էլանկ նորա (Սմբատայ)... Իբրև հասին ի սելի մարտին...»

ՍՈՐԵՆԱՍԻ «Եւ կոչեցեալ (Հայկայ) զգորս իւր ասէ ցնոսա. « Ելանկն մեր հանդէպ ամբոխին Բէլայ զիպեալ (Վարիանտ՝ դիմեալ) ջանացուք սելոյնց՝ որ անցեալ կայ ի մէջ խառն քաջացն Բէլ:»

ՍԵՔՆՈՍ. Հեփթաղ Վիւթաւալ յերկի կործակեալ: Եւ զօրքն նորա իբրև սեսին զարքայն իւրեանց զարհուրեցան և դարձան և գնացին փախսականս:

ՍՈՐԵՆԱՍԻ. Բէլ կործակեալ յերկի զարկուցեալ... իսկ ամբոխն սեսեալ զայսպիսի ահագին գործ քաջութեան փախեան դէպ երեսաց իւրեանց:

Այս է անցքի ամբողջ նմանութիւնը. մնացածը բոսերի նմանութիւն է: Սերէոս գործ է ամում խառնամբոխ մակրայր: Մորենացին՝ ամբոխ գոյականը: Այնուհետև երկուսի մէջ էլ պատմութեան ընթացքում բայց ոչ բոլորովին համանման դէպքերում գործածուած են՝ արք. նիզակ, կուռ, մարտ, արքայ զարհուրել, յարձակիլ ի միմեանս հասանել, ծակատ: Պ. Մալաթեանն իւր մանրակրկիտ քննութեան մէջ մինչև անգամ այսպիսի նմանութիւնն էլ զծում է. «Մորհէր (Բէլ, երբ Հայկից փախչել է ու գում) ի միջոցի ամբանալ ամբոխին, և «ի մէջ երկուց ծակատուց մորա կզեալ (Սմբատ և Հեփթաղ) ընդ միմեանս կուռէին: Մեծ նմանութիւնն զի «միջոց» բառը «մէջ» արմատից է կազմուած:

Մենք այդ նմանութիւններին արժէք չենք տալի որովհետև այդպիսի և այդքան նմանութիւններ, և աւելին ևս ոչ միայն Սերէոսի և Մորենացու մէջ եղած մի պատերազմի նկարագրի մէջ կարելի է գտնել, այլ և ուրիշ շատ հեղինակների: Առնենք, օրինակի համար, Եղիշէի մէջ Աւարայրի ծակատամարտը և համեմատենք մի կողմից Սերէոսի միւս կողմից Մորենացու մեզ հետաքրքր-

* Տես «Արարատ» 1899 թ. համար Ժ.—ԺԱ. եր. 459:

քրրոց կտորներն հեռաբերելով բովանդակութեամբ ու բառերով և միայն բովանդակութեամբ նման հասուններ:

1. ԵՂԻՆԷ. «Եւ փոռ թ ով մանեքեան ի սեղի պատերազմին եկեալ հասանէին իւրաքանչիւր զօրօ մաննայն պատրաստութեամբ... Համագունգ հասանէին ի գործ պատերազմին ի դաշտն Արտազուն» (Եր. 145 հա.): Իսկ միւս կողմից «Զօրագլունն պարսեց խաղայր գայր ամենայն հեթանոսական բազմութեամբն և կեկայ հասանէ յաշխարհն Հայոց» (Եր. 155):

ԽՈՐԵՆԱՅԻ. «Զօրմտողով շինի ի վերայ նորա (Հայկայ) տիտանեանն Բէլ ամբոխիւ հետեակ զօրաց, զայ հասանէ ի հիւսիսի յերկիրն Արարաղայ... փոռ թ ալր հասանել ի սահմանս բնակութեան Հայկին... Աճապարեալ Հաւաքէ (Հայկ) զորդիս իւր և զթողունս... Եւ կոչեցեալ զօրս իւր...» (Եր. 34. հա.):

ՍԵՐԷՆՈՍ. «Սմբատ ժողովի զգարն... գումարէ և այլ զարս բազումս յօգնութիւն իւր և զիմեալ գնայր ի վերայ ազգին Քուշանաց և արքային Հեփթաղեայ: Եւ նա անտի մեծաւ կազմութեամբ ընդդէմ ելանէ նորա (Սմբատայ), եկին հասին ի սեղի մարտին» (Եր 66—67):

Ձ. ԵՂԻՆԷ. Վարդան ճառ է խօսում իւր մարդոց. «Եթէ տացէ Տէր յաղթութիւն ի ձեռս մեր սատակեացուք զզօրութիւն նոցա... և եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց սուրբմահաւմբ պատերազմիս ընկալցուք խնդութեամբ սրտի... Եթէ զայլս կատարելով... պարձանս անձանց ժառանգեցաք... որչափ ևս առաւել եթէ մեք մեռանիցիմք...» (Եր. 148 հա.): Աւրեմն մի երկուրութիւն—մեզնեք կամ մեռնել:

ԽՈՐԵՆԱՅԻ. Հայկ նոյնպէս ճառ է խօսում իւր մարդոց և նոյն երկուրութեամբ. «Վամ մեոցուք... կամ զաղոութիւն մատանց մերոց ի նա ցուցեալ ցրուեցի ամբոխն...» (Եր. 35):

ՍԵՐԷՆՈՍ. Ճառ չկայ:

3. ԵՂԻՆԷ. «Վարդան զզօրագլունիսն կարգեր (յակնէ յանուանէ յիշում է թէ որ գունդն ում է յանձնում)... Յանն իւր [ինքն] առնոյր զգունդն չորրորդ... կարգեր և կազմէր գծակասն յորդորելով ընդ ամենայն երես յաշին զիմ յանդիման Արեաց գնդին առ ամեն Տղմուտ գետոյ» (Եր. 173):

ԽՈՐԵՆԱՅԻ. «Կարգէ (Հայկ) զԱրմենակ (և միւսներին)... և ինքն առաջի... Զի միւս անգամ ձակաս յօրինեցէ...»

ՍԵՐԷՆՈՍ. Գնտերը կամ թեկերը կարգելը չկայ, բայց «ձակասեցան զիմ յանդիման միմեանց...: Ի մէջ երկուց ձակատուցն»:

4. ԵՂԻՆԷ. «Գազանացեալ զօրութեամբ յիւրեարս յարձակին երկիսան (կողմանքն)... Անդէր տեսնել շտայ մեծի ճազնայիկ և զաղէտս անբաւ թարկուսանացն երկոցունց կողմանցն առ ի յանդուր յարձականէին զմիմեանս բախելով (Եր. 173 հա. իսկ Խաղխաղի կուռի մէջ, շառ յոյժ յանդուր յարձակմանն):»

ԽՈՐԵՆԱՅԻ. «Բազմութիւն անկարգ հրոսակի ամբոխոյն Բէլայ ցան և ցիր յանդուր յարձակմանը ընդ երես յաշին սուրալով... Եւ հասեալ երկոցունց կողմանց սկայիցն ի միմեանս... Տարագուք յարձակմանցն... Զայսպիսի անկուռնելի զիպուած թարկուսանաց տեսեալ...»

ՍԵՐԷՆՈՍ. «Եւ յարձակեալ աստի և անտի մեծաւ ճազնայու ի միմեանս հասանէին», բայց ոչ երկու զօրքը, այլ Սմբատ ու Հեփթաղ:

5. ԵՂԻՆԷ. «Յերկոցունց կողմանց բազում միւրաւորք յերկիր անկեալ զիսրայիս խաղային», [Իսկ Խաղխաղի կուռի մէջ «Այր զախոյեան իւր յերկիր կործանէր»:»

ԽՈՐԵՆԱՅԻ. «Անդ ոչ սակաւք յերկոցունց կողմանց... տապալ յերկիր կործանէին... «Բէլ կործանի յերկիր զարկուցեալ»:

ՍԵՐԷՆՈՍ. Սմբատ «հարեալ զնա (զՀեփթաղ) զաւրութեամբ զիսրայիս յերկիր կործանէր»:

6. ԵՂԻՆԷ. «Ի վեր հայեցաւ քաջն Վարդան և տեսանէր զընտիր ընտիր քաջ նախատակաց պարսից զօրունս, «Բէտ ակն ի վեր համարանայր Մուշկան Նիսալաուրայ, քակեալ զոմանս տեսանէր ի գնդէն Հայոց, և զկնի մնացեալ ի հովիտս լերանցն» (Եր. 175):»

ԽՈՐԵՆԱՅԻ. «Հասանեն ի միջոց ինչ զաշտանէ լերանց... ի վեր զերեսս ամբարձեալ, երևեցաւ նոցա բազմութիւն...»

ՍԵՐԷՆՈՍ. չկայ:

7. ԵՂԻՆԷ. «...Որ ի վերայ նոցանս տէր ի բարձր դիտանցին իրրև յամուր քաղաքին» (Եր. 176):»

ԽՈՐԵՆԱՅԻ. «Բէլ... ի վերայ ոստոյ միոյ իրրև ի դիտանցի»:

ՍԵՐԷՆՈՍ. չկայ:

8. ԵՂԻՆԷ. «Մեծաւ ուժով յարձակէր (Վարդան) ի սեղին (ուր էին զընտիր ընտիր քաջ նախատակաց պարսից զօրունս):»

ԽՈՐԵՆԱՅԻ. «Գիպեալ ջանասցուք սեղոյնն ուր անցեալ կայ ի մէջ խոան քաջացն Բէլ»:

ՍԵՐԷՆՈՍ. չկայ:

9. ԵՂԻՆԷ. «Տեսանէր (Վարդան) զընտիր ընտիր քաջ նախատակաց Պարսից զօրուն» (Եր. 175):»

«Յարմե ևս յանկի զերեք հաղարեան սպառազէսսրն պատրաստէր (Մուշկան) և զընտիր ընտիր նախատակացն շուրջ զիւրեաւ գումարէր... Եւ զայլս ևս ամենայն զընտիր ընտիր զօրուն մարդիկ ի մի վայր ժողովէր» (Եր. 172): «Ի փայլիւն պատենազէն վանդոցն» (Եր. 174):»

նորեն ԱՅԻ. «Մանեա Հայկ զխումբ վտռելոյ ջո-
կատին, յորում Բէլ առաջի ամբողին եկեալ Հաս-
եալ ընտրիս էւ վտռելոյն ումամբ... ընտրիս յայմէ էւ
ի ձախմէ: Եւ տեսեալ Հայկին զտիտանեան կուռ
վտռելոյ և զարս ընտիրս ընդ նմա պիմն էւ անե-
կինս...»

ՍԵՐԷՆՈՍ. չկայ:

10. ԵՂԻՇԷ. «Հնչումն ձայնից զքարան-
ձաւս լերանցն շարժէր...: Ընդ էր տեսանել
շտապի տպանապի և զազէտս անբաւ տարակուսա-
նաց երկոցունց կողմանցն, առ ի յանդուզն յար-
ձակմանս զմիմեանս բախելով. քանզի թանձրա-
միտքն յիմարէին և վատաստիրտքն լքա-
նէին...» (Եր. 174):

նորեն ԱՅԻ. Ահա գիշ զգրդիւն և վերայ
երկրի առնէին շահատակելուն, և ահա պա-
կուցանողս տարազուք յարձակմանցն զմիմեամբ
արկանէին...:

ՍԵՐԷՆՈՍ. չկայ:

11. ԵՂԻՇԷ. «Ոչ եթէ կողմ էր որ յաղթեաց,
և կողմ էր որ պարտեցաւ, այլ քաջք ընդ քաջս
կէտալ...»:

նորեն ԱՅԻ. «Մարտն յերկոցունց կողմանց
մնայ անպարտելիս:

ՍԵՐԷՆՈՍ. «Ոչ կարէին վաղվաղակի զմի-
մեանս յաղթահարել, զի արք սակաւազարք
(սկիսազարք) էին երկոքին...»:

12. ԵՂԻՇԷ. «Արդանն ընկնում է «Քանզի
անկեալ էր մեծ սպարապետն Հայոց ի պատերազ-
մին... ցանեալ ցրուեցան» (Հայք) (Եր. 177 Հա...):

նորեն ԱՅԻ. Բէլն ընկնում է: «Եսկ ամբողին
նեանալ զայսպիսի ահագին գործ քաջութեան, փա-
խեան իւրաքանչիւր դէպ երեսաց իւրեանց»:

ՍԵՐԷՆՈՍ. «Եւ զօրքն նորա (Հեփթաղեայ) իր-
բն ընտրի զարքայն իւրեանց (անկեալ), զարհուրե-
ցան և դարձան և դնացին փախսական...»:

Եթէ այսպէս շարունակինք, դեռ մի
քանի նմանութիւններ էլ կը հասնենք: Ընթեր-
ցողը կրտսանէ, որ Եղիշէի և Մորենացու
Եղիշէի և Մերեոսի նմանութիւններն աւելի
են և մեծ քան թէ Մորենացու և Սերեո-
սի: Իսկ միւս կողմից՝ ինչ նմանութիւն որ
Սերեոսի և Մորենացու մէջ կայ, գրեթէ բո-
լորը կան և Եղիշէի մէջ: Ուրեմն ի՞նչ պիտի
եզրակացնել: Արդեօք Մորենացին Սերեոսից
օգտուելուց զատ՝ նոյն բանի համար Եղիշէից
էլ է օգտուել, կամ թէ Եղիշէն Սերեոսից
ու Մորենացուց է օգտուել կամ թէ, ընդ-
հակառակն, Սերեոսը Եղիշէից:

Մեր կարծիքով այդպիսի նմանութիւն-
ները ոչինչ չեն ապացուցանում մի պատմա-

գրի միւսից կախման մասին: Պատերազմնե-
րը միշտ իրար նման են, և միեւնոյն լեզուով
պատմուած պատերազմների նկարագրի մէջ
միշտ կը լինին զօրք, զօրք ժողովել, մարտ,
տեղի մարտի, նիզակի, զրահա սրու թիւն,
վառեալ, պատերազմի տեղ հասնել, զուե-
ղեր բաժանել, իրար վրայ յարձակուել, իրա-
բուց վախենալ, հակառակորդին գետին զո-
րել, սպանել, կոտորել, փախչել են. ևն: Եւ
մեծ զարմանք չէ, որ այդպիսի բաներ կամ
նման նկարագրիներ զանեմք Եղիշէի, Մորե-
նացու, Սերեոսի և ուրիշ մատենագիրների
մէջ: Այդ բաներն ու նկարագրիները ընդհա-
նուր զործածական ծնւակաւն դարձուածներ
(formelhafte Wendungen) են: Իսկ ապացոյց
հիմնել այդպիսի դարձուածների ու բաների
վրայ կարելի չէ: Եւ իզոյր չէ, որ պրոֆ.
Բեռնհայմ իւր «Պատմութեան մեթոդի դա-
սազրբի» մէջ¹ խօսելով մի պատմագրի կա-
խումբ միւսից ցոյց տալու եղանակի մասին,
տաանձնապէս շեշտում է թէ պէտք է բա-
ւական նկատողութեան առնուին այդպիսի
ձեւական դարձուածները և ապացոյցների թը-
ւից դուրս ձգուին անոնք, թէ չէ հետազօ-
տողը սխալ եզրակացութեան կարող է հաս-
նել: Բայց որքան աւելի սխալ կարող է լինել
այն եզրակացութիւնը, որ հիմնուած է մի-
այն այդպիսի դարձուածների վրայ:

Կընտրեն ընթերցողները, որ մի փոքր
աւելի երկար կանգ առնենք այս մասին: Ո-
րովհետեւ մեզնում երբ արդէն սկսել են մեր
մատենագիրներն իրար համեմատել և «ոճի»
նմանութիւններից եզրակացութիւններ հա-
նել, համեմատութեան եղանակի այդ էական
կողմի դէմ բաւական մեղանշում են: Հարկա-
ւոր է զգուշացնել այդ «ոճի» մասին դատող-
ներիս: «Ամենայն ժամանակ կան իրողու-
թիւններ, գաղափարներ ու մտածութիւններ,
որոնց արապայտութիւնը անկախ կերպով մի
մասնաւոր անհատի մաքի մէջ չէ ծնւում,
այլ առնւում է լեզուի հասարակաց պատ-
րաստի շտեմարանից: Գիտութեան ամեն ճիւ-
ղերի մէջ կան որոշ տեքնիկական կամ ասա-

¹ Ernst Bernheim, Lehrbuch der Historischen
Methode, Leipzig, 1894.

ցուած դարձուած (phrasenhaft) արտայայտութիւններ, որոնք հնաւանդ սովորութեամբ գործ են ածուում որոշ իրողութիւններ ու յարաբերութիւններ յայանելու համար մանաւանդ այն ժամանակներում և զիտութեան այն ծիւղերում որոնք արդէն մի կլասիկական մշակուած գրականութիւն և գրական լեզու ունին ուստի և աւելի մեծ պաշար ունին խօսքի հասարակաց (gäng und gäbe) դարձուածներն, պատկերաւոր ասացուածներն, քարացած բանաձևերն (erstarrte Formeln), աւելի ևս այն ժամանակներում երբ ինչպէս Միջնադարում մի օտար լեզու (լատիներէն) էին արուեստական կերպով իւրացնում և անոր սովորովի դարձուածները բանեցնում»¹

Անշուշտ մեր պատմագիրները օտար լեզու չէին սովորում այլ հայերէն. բայց յայտնի ապացուցում է, թէ որ դարուց սկսած մեր պատմագիրների համար գրարար լեզուն այլ ևս կենդանի գործածական լեզու չէր, այլ սովորովի Նւ արդեօք կարծածից աւելի հի՞ն չէ մեր լեզուի մէջ կատարուած այն մեծ կերպարանափոխութիւնը, որով գրարար և աշխարհարար լեզուներ են կազմուել. Նւ արդեօք նոյն իսկ Սերէոսի ժամանակ գրարար լեզուն նոյնպէս արուեստական կերպով սովորովի չէր ինչպէս Յովհաննէս Կաթուղիկոսի ժամանակ, Բանի դեռ լեզուի կերպարանափոխութեան այս ժամանակը հաստատ չէ որոշուած, ամեն լեզուական կամ «ոճի» քննութիւն դեռ ևս խախտւած հիմքի վրայ կրմնայ, Մանաւանդ պէտք չէ մտանայ որ ինչպէս եւրոպական պատմագիրները նոյնպէս և մերոնք ազատ կերպով օգտուում են «Սուրբ գրքի միւսնոյն դարձուածներն, որոնք այդ ժամանակներում լեզուի պատմական գործածութեան համար հասարակաց ստացուածք էին. իսկ մեր մատենագիրների համար Սուրբ գիրքը ոչ միայն իւր դարձուածներով ու պատկերաւոր խօսքերով օրինակելի էր, այլ և իւր կլասիկական լեզուով. Ո՞նչ է ուրեմն եզրակացութիւնը, Մատենագիրների իրարուց ունեցած

կախումը ցոյց տալուց առաջ, «պէտք է հիմնովին ճանաչել նոցա ժամանակի գրականութիւնը և գրական տեսակը, որպէս զի հնարաւոր լինի տարբերելու թէ ինչն է լեզուի հասարակաց գործածութեանը պատկանում և ինչն է մի որոշ մատենագրի առանձնայատուկ արտայայտութեան եղանակը» և եզրակացութիւնը միայն այս վերջինի վրայ պիտի հիմնել: Բայց այդպէս են վարուում մեր մատենագիրների հետ. թէ՞ նոցա գլխին իսպ կնանում եզրակացութիւններ տարածելով որոնք «միայն յուշատարի կարճ նկատողութիւններից են կազմուած» և եզրակացութիւններ հանելով ոճի և արտայայտութեան մի քանի նմանութիւններից, որոնք մի մատենագրի միայն յատուկ սեպհականութիւն չեն, անհաստական յատկանշաններ չեն, այլ ընդհանուր:

Մեր ներքեում մի օրինակով ևս ցոյց կրանք թէ ինչ արժէք ունի այդպիսի շնչին համեմատութեան նիւթերից հանած եզրակացութիւններից մէկը, որ պ. Խալաթեանը յայտարարում է Սերէոսի «ոճի» մասին. Բայց այստեղ աւելորդ չի լինի որ մի երկու խօսքով բովանդակութեան նմանութեան վրայ ևս կանգ առնենք:

Պատմական գրուածներն համար ժամանակագրական շարքը կամ դասաւորութիւնը որով իրողութիւնների առանձին զխոյուածները կամ նոյն իսկ իրողութիւնները պատմուում են, կարող չէ ինքն ըստ ինքեան (an und für sich) իրրե մի դասանիշ-կրիտերիում ծառայել մի պատմագրի կախումը միւսից ցոյց տալու համար, զի «այդ շարքը կամ շարագատութիւնը, իրրե իրերի բնական գրութեան մէջ եղած մի բան ներկայանում է ամեն մի հեղինակի՝ անկախ մի ուրիշից»¹ Ուստի և եթէ Սերէոսի ու Խորենացու կամ Սերէոսի ու Նղիշէի մէջ մի որեւէ պատերազմի նկարագրի մէջ նման զիպուածներն շարքի նոյնութիւն ևս գտնուում ենք, այդ դեռ ապացոյց չէ, որ մէկը միւսից կախում ունի: Հին պատերազմներին շատ յատուկ է նախ գօրք ժողովելը, ապա թշնամու վրայ գիմելը:

¹ Bernheim, Lehrb. der Hist. Meth. Եր. 316 հտ. 318 հտ.

և այն որ թշնամին էլ իւր կողմից զօրք ժողովէ և յարձակողի գէմը դուրս գայ, ու կրկուսը ճակատին, այդ ժամանակ զօրավարը ճառ խօսի, խրատուէ, ապա իրար վրայ յարձակուիս կոտորեն և երբ մէկի զօրավարն ընկնում է, սրովհետև զօրավարն ամենամեծ տեղն էր բռնուան նորա զօրքերը փակչեն, յաղթողները ետևներից ընկնեն, կոտորեն, ասպատակեն, գերի, աւար առնեն: Միթէ այս և ասոր նմանները նման կամ նոյն ժամանակադրական կարգով չե՞ն կատարուել գրեթէ ամեն հին պատերազմների մէջ, Եւ միթէ որեւէ քան կարող է ապացուցանել այն որ մի մասննազիր վերոյիշեալ դիպուածները նոյն ժամանակադրական շարքով պատմէ, ինչպէս իսկապէս կատարուել է իրողութիւնը:

Այսպէս Հայկի ու Բէլի Սմրատի ու Հեփթաղի մէջ եղած մի քանի ձեական դարձուածների և նոյն իսկ դիպուածների շարադասութեան նմանութիւնը ոչինչ չեն կարող ապացուցանել թէ Խորենացին Սերէոսից օգտուել էր Այդպիսի եզրակացութեան հասնելու համար, մի փոքր աւելի քան է հարկաւոր քան մի քանի ընդհանուր պատերազմական դժեր ու բառեր:

Սմրատի ու Հեփթաղի և Տրդատի Գլծաց թագաւորի կռիւները.— Պ. Խալաթեանը գրում է. «Հերակկի պատմարանի (Սերէոսի) ընդարձակ աշխատութիւնը իւր որոշ, ազուր կերպով գծագրուած կերպարանքն ունի... լեզուի ոճի բառերի գործածութեան... կողմից, որոնք անցնում են նորա ամբողջ պատմութեան միջով և սերտ կապուած են անոր բովանդակութեան հետ մինչդեռ Անանուսի այս գրութիւնը... մի խայտաճամուկ քաղուածք է զանազան ազրիւրներից» (եր. 73): Փորձենք այդ «որոշ ոճ» ունեցող պատմողի մի կտորը միայն համեմատել Ազաթանգեղոսի և Աստուածաշնչի հետ, և յստակապէս մեր Սմրատի ու Հեփթաղի կռիւր, և տեսնենք թէ նա որքան «խայտաճամուկ» չէ: Հեղտութեան համար մենք Սերէոս և Ազաթանգեղոս մի սրեւակի մէջ կրգնենք. իսկ Աստուածաշնչի Դաւթի և Գողիաթի կատի նմանութիւններից տակին, ծանօթութեան նշաններով:

ՍԵՐԵՈՍ

ԱԿԱՌԱՆԳԵՂՈՍ

Յայնժամ Սմրատ ժողովէ զգարն՝ և վերափն սպառազինէ, զունարկ և այլ զարս բազումս՝ յօգնօ թիւն իւր, և զիմեալ զկայր ի վերայ աղցին Քուշանաց և արքային Հեփթաղեայ: Եւ նա անտի մեծաւ կազմութեամբ ընդդէմ կշանէ նորա. և կին հասի և ի սեղի մարտի և ճակատեցան դիմ յան. դիման միմեանց: *

Յատուր ժամանակացն այնոցիկ զօրմտողով լինէր իշխանն Գլծաց. և յազում զունդա զօրաց ժողովեալ՝ զայր տալ մարտ պատերազմ ընդ իշխանին Յունաց....

Արդ պատգամ յիկ առ Սմրատ արքայն Քուշանաց և ասէ. «Զինչ անգուտ է այսպէս խառնամարտի մտան ել ի պատերազմ՝ սպանել զզարս մեր... բայց եկ ես և դու միայն մարտիցուք»^{**} Եւ այսինքն ևս ասի անոյն ևս զու այսի... Եւ յարձակեալ աստի և անտի մեծաւ տագնապաւ ի միմեանս կերպն (Տրդատ) և թահասակին... և ոչ կազաւորն... ի միմեանս բէին վազվազակի զմի մեանս յաղթահարել...

Պատգամս յիկ օրինակաւ այսուիկ, եթէ ընդէր բնաւ ելան եմք խառնամարտի ի պատերազմ՝ սպանել զզարս մեր... ևս աւակի անոյն ևս կանեմք ի մերոց զօրաց ասի, ևս դու ինձ ի յունականաց այսի. հասցաւ ևս և կեսցաւ ի սեղի մարտի... Եւ իբրև յանդիման եղեն միմեանց կայսերականերպն (Տրդատ) և թագաւորն... ի միմեանս հասակին. անդ յաղթահարէր կայսերակերպն ըզթագաւորն:

«Եւ ժողովեցին այլազգիքն զրանակս իւրեանց ի պատերազմ, և գումարեցան ի Սոկքով Հրէաստանի... Եւ Սաուզ և արք իւրայելլի ժողովեցան և նորա ի հովիտան և ճակատեցան ի պատերազմ ընդդէմ ալադգեացն» (1—2): «Եւ ճակատեցան իւրայելլացիքն և այլազգիքն հանդէպ միմեանց ճակատ առ ճակատ» (21):

Աւելորդ չի լինիլ Սերէոսի պատմութեան շարունակութեան զիմաց Աստուածաշնչի պատմութեան շարունակութիւնը գնել:

1. Ուշադրութիւն դարձնել զօրք ժողովելու ի մասս ի կրկնութեան վրայ.
* Ա. բազ. թէ.
** Ա. բազ. թէ.
«Տուր այր մի ևս ևս նա մեկամարտեցաւ երկուսն (10)»
2. Սերէոսի մէջ այս վերջին խառն տուայ է գրուած, մինչդեռ Ազարանգեղոսի մէջ յետոյ գրուած:

ՍԵՐԵՍ

Ա. ԹԱԳ. ԺԷ.

Եւ զարքն նորա
իրեր սեռին զարքան իւ-
րեանց (սպանուած) ...
զնացին փախստական, և
սորա զնն արշաւեալ Հա-
սին սպասակաւ մինչև ի
Բաջ Հաստաման:

Իրեր սեռին ալազգի-
քն թէ մեռաւ զօրաւորն
նոցա (Գողթաթ) փա-
խան, և յարեան արք
Սարայէլի... յարձակե-
ցան զնն նոցա մինչև ի
մուտս Գեթայ...: Եւ
զարձան սպասակալն
զնն ալազգեացն(51-53):

Ահա երկու պատմութիւն, մէկը Սերէ-
ոսի, միւսն Ազաթանդեղոսի մէջ, որոնք ոչ
միայն զէպքի և պատմութեան քի նմանութիւն
ունին այլ և նոյն անգում իմաստի կրկնու-
թիւն: Սերէոսը կարող է միայն համառօտաձ
լինել Ազաթանդեղոսի աւելորդարուն նկարա-
գիրը, մի երկու խօսք առաջ զնկով, մի եր-
կու բան էլ Աստուածաշնչից օգտուած լինե-
լով: Մենք չենք պնդում այդ բանի վրայ և
չենք էլ ասում որ այդ օգտուելն անպատ-
ճառ գրաւիցարար է եղել և ոչ էլ մեր նպա-
տակն էր ցոյց առ Սերէոսի կախումն Ազա-
թանդեղոսից կամ Աստուածաշնչից: Բայց
մի բան միայն պարզ է, որ եթէ պ. Պալա-
թեանն այս օրինակն իմացած լինէր, նա
այնպէս զրական կերպով չէր խօսիլ Սերէոսի
ազգու զձազրուած որոշ ոճի լեզուի և ըն-
մասին և նորա զիմաց չէր զնիլ «խայտաճա-
մուկ» Անանունին, և այդ երկու ոճի այդպի-
սի կարծեցեալ մեծ տարբերութեան վրայ սրե
է ինքնազրուութիւն չէր հիմնել: Չէ՞ որ Սերէոսն,
այդ կտորով զոնկ, շատ աւելի «խայտաճա-
մուկ» է քան Անանունը, եթէ միայն հա-
կառակ պ. Պալաթեանի կարծիքի՝ Անանունի
զպրութիւնն էլ Սերէոսի աշխատանքը չէ:

Բերենք մի օրինակ ևս:

Հայկի ու Բէլի եւ Սամի ու Զերքույի կոխ-
ները—Ամենից առաջ նկատենք, որ մենք զըժ-
բախտարար պիտք է բուսակամանից պ. Գիւլ
զագեանի թարգմանած Մահնամայի մի հա-
տուածով միայն և յատկապէս շեշտում ենք,
որ մէկը՝ Հայկի տառապելը՝ դրարար է գրած,
մեր կրտսերական լեզուով իսկ միւսը մեր
ժամանակի աշխարհարար Ռուտի և բուսերի
ու գարձուածների ընտրութեան մէջ մեծ
տարբերութիւն կարող է լինել: Բայց անսէք

որքան նմանութիւն այդ երկու տառապելի
մէջ:

Սամ պահաւանի զէմ կնում են
Մազանդարանի վայրենի արագընթաց, կա-
տարի կուռտները: Սէգ-սար կոչուած նեո
ղեկը (հսկաներ), որոնք Պրանի կարիճներից
աւելի քաջասիրտ են կուռարար առիճներ,
ահեղ ինձերին իսկ հաւասար, և որոնց զը-
խարն է փղանման մի սալագագաթ զեւ
[Հմմտ. Պորենացու մէջ՝ Հայկի զէմ եկող
Բէլի յաւերժ քաջերը, երկայնագիւղօք հա-
սակօք, միցող (կուռող, անհուն խօլ ուժա-
ւոր ու զօրաւոր սկաները]: Այդ հսկաները
մի տեղ ժողովուած խառնամթոխ հրոսակ,
Քէրքույի գլուխներն անցած, շուրս են
զալի խուժելով զէպի դաշտը ընդարձակ այն-
քան սպայ, որ լցուած է մի սարից միւս
սար, գալիս են շուտ Սամի զէմ կուռելու
միահամուռ բազմութեամբ, այնպէս մթին
խուռն ու խրթին գրոհ աալով շատամամբ՝
հենց շարժ են անում, որ գետինը գրգռուե-
լով գողգողում է: [Հմմտ. Պորենացի՝ Բէլն
յանդուզն և անձոռնի զօրութեամբ ամբոխին
որպէս յորձան ինչ սաստիկ ընդ զառիվայր
հեղեալ՝ փութայր: ...] միջոց ինչ դաշտա-
ձև լիբանց... բազմութիւն անկարգ հրոսակի
ամբոխոյն Բէլայ ցան և ցիր յանդուզն յար-
ձակմամբ ընդ երեսս դաշտին սուրալով—
Բէլ առաջի ամբոխին եկեալ—Եւ հասեալ
երկոցունց կողմանց սկայիցն ի միմեանս
ահալին զգրգռուն ի վերայ երկրի առնելին շահա-
տակելովն]: Մի կողմից այդ զեկերի «ուղ և ծու-
ծը դատարկում է Սամի համբաւից», և յար-
ձակման ժամանակ «արհաւիրքից խելագար-
ում է նոցա ամբոխը», իսկ միւս կողմից,
յարձակման ժամանակ և Սամի «զօրքերի
մէջ երկիւղ է ընկնում», «անուանի քաջե-
րի զէմքը զեղնում» [Հմմտ. Պորենացի՝ Ահս
պակոցանոցս տարազուք յարձակմանցն ըզ-
միմեամբք արկանելին]: Կուռի մէջ ընկնում
են երկու կողմից իսկ Սամը «գետին փռում
մէն մի յարձակումին հարիւրին», և մէն մի
գուրզի տակ տապալում մի զեկին: [Հմմտ.
Պորենացի՝ Անո ոչ սակաւ ք յերկոցունց կող-
մանց սկայիցն արք յաղթանդամք բերանոյ
սրոյ զիպեալ տապալ յերկիր կործանելին]:

Այնուհետև ինչպէս հայոց առասպելի մէջ, նկարագրուած են երկու պարագլուխները: Սամ և Քէրքույի: Քէրքույի՝ «ժանտատեսիլ, զժննայ կերպարանքով, փղանման, սալ գազաթով, կարիճ մարդ, նոճի հասակով, զլիւին սաղաւարտ» ձեռին պողպաջատր սուր, մէջքին գօտի, վէս և աշխարհակալ Սելմ Ծասի սերունդը, որի մօտ ամենասէր խորխտ խիզախը հող է համարեալ, որի հսկայ զօրքերը մըջիւնի ու մերեխի են նմանում բազմութեամբ ու ծածկում դաշտ ու լեռ: [Հմմտ. Խորենացի՝ Բէլի բնաւորութիւնը և ոյժը, Բէլ բռնաւոր, որին յաջողել էր «բռնանալ և ունել զամենայն երկիր և օրրել բազմակոյտ հսկայիցն անհուն խօլաց և ուժաւորաց», և խորխտալով ուզում է Հայկին էլ նուաձնը Գլխանոց ազօւցեալ երկաթի գօտեւորեալ զմէջնս՝ յահեկէ զստինն երկսայրի կուռ վառեալ և շն.]: Իսկ Սամը, որ նոյնպէս հսկայ է, ինչպէս մեր Հայկը է սրով և քէյանեան աղեղով, որի կոթը խասանց փայտից է և փքինը պողպատ, նետը սրաթափչ արծուի: [Հմմտ. Խորենացի՝ Հայկ կորովաձիգ և հաստաղեղն, լայնալիճ, նետը՝ երեքթեան, իսկ Հայկի որդիքը՝ արք կորովիք էին յաղեղն և ի սուսեր,] Կուռ յարձակման ժամանակ Սամը իւր աղեղից նետ է արձակում Քէրքույի վրայ և վերջը բռնում է նորան և «փլի նման փրթաւում ու զարկում գեանին»: [Հմմտ. Խորենացի՝ Հայկը մօտ հասանէ յարքայն (Բէլ), լի քարէ պինդ զլայնալիճն... և ճոխացեալն տիտանեան կործանի՝ յի կիր զարկուցեալ]: Եւ երբ Ծասն (արքան) այդպէս նսեմարար ընկաւ փչեց իւր հողին, նորա զօրքը երեսները դէպի փախուստ դարձրին, ընկան սուր ու զաշտ... [Հմմտ. Խորենացի՝ Արքայն տիտանեան փչէ զողին: Իսկ ամբոխն տեսեալ զայսպիտի ահագին գործ քաջութեան, փախեան իւրաքանչիւր դէպ երեսաց իւրեանց]:

Ահա երկու պատմութիւն, որ էութեամբ նոյն են, այլ և շատ անդ բառացի նոյն: Երկու դէպքում էլ հսկաներ են իրար դէմ կռուողները, ունենալով իրենց զլիւին մի մի աւելի մեծ հսկայ: Երկու դէպքում էլ նկարագրուած են առանձնապէս այդ զլխաւորները

և նոցա գրեթէ նման զինավառութիւնը: Երկու դէպքում էլ յարձակուողը, որ յետոյ յաղթւում է, աւելի մեծ բազմութեամբ է՝ մի խառնիխուռն անկարգ հրոսակով, իսկ յաղթողը թուով նուազ է: Երկու դէպքում էլ յարձակման ժամանակ երկիրը դրրդում է, երկուստեք վախենում են, և երկուստեք զետին փռում կամ կործանում շատերին: Երկու դէպքում էլ յաղթող հերոսը նետաղեղ է բանեցնում: Երկու դէպքում էլ թշնամու պարագլուխը սպանւում է գետին զարնուելով: Երկու դէպքում էլ երբ արքան սպանւում է, նորա ամբոխը զլուխ առած փախում է: Եթէ շարունակենք, դեռ մի քանի «երկու դէպքում» էլ կրբերենք. իսկ նոյն կամ համանիշ (շեշտում ենք զբարարի և աշխարհարարի տարբերութիւնը) բառեր՝ «արքան ուղէք. — կռուող (մրցող), բազմութիւն, զօրք, ամբոխ, զետին փռել, տապալել (տապար յերկիր կործանել), խուռն, կուռ, զրոհ տալ, խուժել (սուբալ), մօտ գալ (մօտ հասանել), աղեղ, գօտի, զլիմել, զետին զարնել, հողին փչել և շն. և շն.:

Ուրեմն ի՞նչ պէտք է եզրակացնել: Արդեօք Խորենացին Հայկի ու Բէլի կոխը «շինելու» համար Սերէտոյց է օգտուել, թէ՞ Ազաթանգեղոսից, թէ՞ Աստուածաշնչից, թէ՞ արդեօք այդ բոլորից յետոյ Փիրղուսից էլ է օգտուել: Բայց այդ դէպքում խօսքը Խորենացու ժամանակը ամենավաղը 11-րդ դար պէտք էր ընել: Թէ՞ արդեօք Փիրղուսին է շահնամայի համար Խորենացուց օգտուել — Բայց զուցէ առարկէ պ. Խալաթեանը թէ, որովհետև Խորենացուն ծանօթ են եղել պարսից ուրիշ առասպելները, որոնք մտել են Ծասնամայի մէջ, ուստի և նորան կարող էր Սամի առասպելն էլ ծանօթ լինել: Ուրիշ խօսքով Փիրղուսին ու Խորենացին իրարուց անկախ կարող էին օգտուած լինել նոյն կամ առնչութիւն ունեցող աղբիւրներից: Բայց այդ ժամանակ խօսքը անգիշտ չէր ունենալ Հայկի առասպելի վիպականութիւնը հերքելու: Քանի որ Փիրղուսու աղբիւրները, զրաւոր թէ բերանացի, ժողովրդական ծագում ունին:

(Նարեկեանի)

Մ. Արեղեան

